# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լեվան ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Ղեկավարի բազկաթոռը պետք է լինի շարժական, հոլովակավոր` հինգ անվակների վրա, որոնք միմյանց պետք է կապակցված լինեն հինգ թևանի երկաթե խաչուկով: Անիվների միացման կապակցող դետալները պետք է լինեն մետաղից, անիվները` ռետինե և երեսպատված` փայտե դետալների համադրմամբ: Բազկաթոռը պետք է ունենա փայտե հիմք, որը պետք է պաստառապատված լինի սև կաշվով: Արմնկակալները պետք է լինեն փայտից, բարձրությունը նստատեղից` 20-25սմ: Բազկաթոռի մեջքը և նստատեղը պետք է պատրաստված լինեն մեկ ամբողջական նրբատախտակից: Թիկնակը և նստատեղը պետք է պատված լինեն խիտ, փափուկ սպունգով` 8-10սմ հաստությամբ: Բազկաթոռը պետք է լինի պտտվող, նստատեղը ունենա բարձրացնելու, իջեցնելու, կարգավորվող ճոճման հնարավորություն: Նստատեղի խորությունը պետք է լինի 50-55սմ, իսկ լայնությունը 55-60սմ: Բազկաթոռի արտաքին լայնքը (բռնակից բռնակ) պետք է լինի 60-65սմ: Նստատեղի զրոյական դիրքում` նստատեղից մինչև թիկնակի վերին հատված բարձրությունը պետք է 70-75սմ լինի, գետնից մինչև նստատեղ` 55-60սմ, իսկ գետնից մինչև թիկնակի վերին հատված բարձրությունը` պետք է լինի 120-125սմ : Այլ պայմաններ. * Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը, հավաքումը իրականացնում է Մատակարարը: ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր`չօգտագործված: *** Ապրանքի համար սահմանվում է երաշխիքային ժամկետ` պատվիրատուի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր: ****Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Леван ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2022/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |